

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 բուլլի. կէս տարւումը 6 բուլլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆ. օ. Ն. 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաջօրեայ).

Շաբաթադրութիւնը ընդունվում է ամէն լիցուով.

Շաբաթադրութիւնները համար վճարում են
խաւարանիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆ. օ. Ն. 253.

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ամալիա, Հոբիսիմէ և Քրիստափոր Մարգարեանցները սրտի խորին կսկիծով ծանուցանելով առաջին ամուսին, երկրորդի տագը և երրորդի եղբայր

ՆԵՐՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

անակնկալ մահը, որ տեղի է ունեցել Բալասանի սարափիւրի աղէտի օրերում, յայտնում են ծանօթներին և բարեկամներին, որ սեպտեմբերի 18-ին, կիրակի օր, Վանքի մայր եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ պատարագից յետոյ ժամի 11-ին: 1—2

ԲՈՂԱՆԳԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Կանանց կրթութեան մի նոր ասպարէզ. Վերջին տեղեկութիւններ. — ՆԵՐՍԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընթերցողի օրագիրը. Արդար պահանջ. Մեր դպրոցների բացման առիթով. Կոտորածը. Շուշու. Նամակ Բաթումից. Նամակ Ալաշարէից. Տեղեկութիւններ գաւառից. Կովկասը և մասուրը. Նամակ Գանձակից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ. Պարսկաստանից Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՆԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԿԱՆԱՆՑ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ԱՍՊԱՐԷԶ

Թիֆլիսում յարուցված է կանանց գիւղատնտեսական կրթութեան խնդիրը:

Այդ խնդրով հետաքրքրվող անձերի մի խումբ, ժողովելով կին բժիշկ Սաքարձայի բնակարանում, ընենց այն հարցը թէ որքան մեծ է մեր կանանց մէջ գիւղատնտեսական կրթութեան պահանջը և ինչ եղանակով նպատակաւորմար է կադմակերպել գործը:

Պահանջ կայ, բայց թէ որքան մեծ է նա, կամ իսկապէս որքան նա զգացված է և լաւ բարձրված է — դա դեռ ևս անյայտ է, ուստի ժողովականները ցանկութիւն յայտնեցին, որ մեր կանայք արձագանք տան յարուցված խնդրին և իրանց կողմից ներկայացնեն խորհրդածութիւններ, դիմելով գիւղատնտեսական ընկերութեան բերօյին:

Մենք լաւ գիտենք, որ մեր երկրում գիւղատնտեսութեան մի քանի ճիւղեր կանանց ձեռքին են գտնվում, օրինակ շերամապահութիւնը, կաթնատնտեսութիւնը, պարտիզպանութիւնը, իսկ միւս ճիւղերում էլ նրանք մասնակցում են մի որոշ չափով: Մեզ յայտնի է և այն, որ մեր երկրի մի քանի տեղերում, ուր տղամարդիկ պանդխտում են, ոչ միայն տան տնտեսութիւնը, այլ և ամբողջ գիւղատնտեսութիւնը յաճախ գտնվում է կանանց ձեռքին: Չը պէտք է մոռանալ և այն, որ մի քանի տեղերում, ուր կալուածատէրերը դանադան պաշտօնների պատճառով անկարող են անձամբ վարել իրանց տնտեսութիւնը, կանանց է վերապահված գիւղատնտեսութեան ղեկավարութիւնը:

Այդ բոլորը ճիշդ է և գիւղատնտեսական կրթութիւնը մի կարևորութիւն է մեր երկրի համար, բայց նրա անհրաժեշտութիւնը դեռ չէ մտել հանրային գիտակցութեան մէջ և ժամանակ է հարկաւոր մինչև կազմվի կանանց մի խոշոր թիւ, որը ցանկանար մասնագիտօրէն ուսումնասիրելու գիւղատնտեսութիւնը:

Ազգում գիւղատնտեսական դասընթացները բազմամարդ չեն լինի, բայց ժամանակով նրանք կը գրաւեն շատերին: Անհրաժեշտ է միայն, որ լաւ կազմակերպված լինէր գործը և աշուղ ծրագրված լինէր թէ տնտեսական դասաւանդութիւնը և թէ գործնական գիտելիքների իւրացումը:

Մենք դեռ ևս կը վերադառնանք այս հարցին:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նուխու գէպերի և այնտեղ տիրող վիճակի մասին այսօր հնարաւորութիւն ու

նենք ճիշդ և ամանաւորապէս տեղեկութիւններ հաղորդել:

Բոլորովին ճիշդ է այն տեղեկութիւնը, որ տուինք մենք մեր երէկվայ համարում:

Երեքշաբթի օր, սեպտեմբերի 14-ին, առաւօտեան մի թուրք ատրճանակի հաւրուածով վերաւորում է մի հայի, կասկածելով որ վերջինս չար գիտաւորութիւններ ունի թուրքերի վերաբերմամբ: Անմիջապէս այդ դէպքից յետոյ սկսում են խռովվել թուրքեր ամեն կողմից: Շիաները բռնում են սպառնական դիրք, իսկ սիւնիները աշխատում են հանգստացնել բոլորին և ընդհարումի առաջն առնել: Հայերը փակում են խանութները և փախչում են դէպի տներ:

Շիաները բաղմունքամբ դիմում են վերքի բազարի քարվանսարան, որտեղ գտնվում են մեծ թուրք հայ վաճառականների խանութները և մի որոշ թիւ էլ թուրքերի խանութներ: Դէպի այն կողմն է շտապում անմիջապէս և գաւառապետը: Շիա թուրքերը յայտնում են, որ հայերը պատրաստվել են յարձակվելու թուրքերի վրա և զինվել են: Գաւառապետը խոստանում է խուզարկել խանութները: Թուրքերը չեն սպասում գաւառապետին և հրետով պատճառներով ու առաջ ընկնելով, սկսում են իրանց կատարել խուզարկութիւնը:

Նրանք խուզարկում են միայն հայերի խանութները և գտնում են ատրճանակներ մի որոշ թիւ: Իսկ թուրքական խանութները մնում են չը խուզարկված: Խուզարկութեան հետևանքն այն է լինում, որ հայկական խանութները մնում են անդէմ:

Շիա թուրք ամբողջ միջև լսվում են բոլոր ժամանակը ձայներ «խիցէ՛ք», բայց ոչ ոք չէ վստահանում գործնականի դիմելու: Միւսները կտրական կերպով յայտնում են, որ նրանք բացարձակ դէմ կը լինեն շիաներին և կը խանգարեն յարձակումը:

Բացի այն հանգամանքից, որ սիւնիները չեն ցանկանում շիաների հետ միասին գործել, նրանք չեն ուզում առանց յարգելի պատճառների հայերի հետ թշնամանալ և այն էլ հաշուի են առնում, որ եթէ ընդհարումներ սկսվեն, այն ժամանակ հայերը իրանց յարձակման միջոցին անկարող կը լինեն գնալուսել սիւնիներին շիաներից և կը վնասեն հաւասարակշիւ երկուսին ևս:

Մակայն այդ ժամանակ խուզարկներ գնացած են լինում դէպի Նուխու քաղաքի Ղալա և Գոգի արուարձանները, ուր բացառապէս սիւնիներ են բնակվում և լուրեր են տարածում թէ հայերը բազարում սպանել են Ղալայի անուանի Իբրիմ կոչված թուրքին և նոյնպէս Գոգիի մի յայտնի մարդուն: Այդ արուարձաններին սիւնիները, զայրացած հայերի ենթադրեալ արարքից, իսկոյն խմբվում են և պատրաստվում քաղաքի հայերի վրա շարժվելու: Շիա խուզարկների գործած այդ դաւադրութեան մասին տեղեկանում են շուտով բազարի սիւնիները, որոնք են գտնում իսկոյն Իբրիմին և միւս թուրքին ու նրանց ուղարկում Ղալա ու Գոգի, որպէս զի ներկայանալով ողջ առողջ համոզեն բոլորին, որ խուզարկների

տարածած լուրերը կեղծ են և դաւադրական նպատակ են ունեցել վրեժախնդի մէջ գցելու սիւնիներին: Ամբողջ տեսնելով իրան խաբված, անէծքներ է կարդում խուզարկների հասցէին և հանգստանում:

Սիւնի վաճառականները մեծ շահ ունեն հայերից, կապված են առևտրական յարաբերութիւններով և իրանց համար դժբաղդութիւն են համարում հայերի հետ թշնամանալ: Մի մասնործ վէճի ժամանակ բացակայում է. «Եթէ իմ յոյսը թուրք բէգերի վրա լինէր, ես միւս չը պէտք է ծախէի, բացի մի քանի ֆունտից»:

Ներկայումս յուզմունքը թուլացել է և կարգը վերականգնել է: Հայերը երկուդ են կրում ուրբաթ օրից, բայց վարչական անձինք հաւաստիացնում են, որ բարդութիւններ չեն առաջանալ:

Նուխում բացի եղած վրեժախնդի գործից կայ և դրագունների մի վաշտ, որ նոր է եկել այնտեղ: Այդ վաշտը ուղարկված էր Գէօնուգ թուրք գիւղը, որտեղ խլրտուսներ էին նկատվել: Վերջին դէպքի առիթով վաշտը յետ կանչվեց Նուխի քաղաքը:

Նուխուց դէպի Նուխու տանող ճանապարհի առ այժմ ազատ է յարձակումներից: Բայց ճանապարհորդները վախենում են միայնակ ճանապարհորդել և աշխատում են մի քանի շարք միասին ուղևորվել:

Թիֆլիսում գտնվող երկու օտարազգի թղթակիցներ՝ անգլիական «Times» և ֆրանսիական «L'Echo du Nord» և իտալական «L'Espresso» թղթակիցները վերջին օրերի լուրերից հետո Նուխու և Նուխուի միջև ընկած տարածքի վերաբերյալ տխուր անցքերի հետ: Օտակալի է, որ այն անձինք, որոնց հետ պէտք է շփվեն թղթակիցները, աշխատանքի տալ փաստական նիւթեր իրերի վիճակի մասին, որպէս զի թղթակիցների համար դիւրացրած լինի հաւանական և ճշգրիտ եզրակացութիւններ անելու գործը:

Մենք ստացանք Նուխուց հետեւեալ հեռագիրը, տրված սեպտեմբերի 15-ից: Բաղադրում տիրող յուզմունքը անցաւ առանց մարդկային զոհերի և գոյքի վնասի: Թէ ազգաբնակչութեան խեղճաս մասի ներգործական աշակցութեամբ, թէ վարչական անձինք եռանդուն միջամտութեան շնորհիւ շատ շուտով կը վերականգնվի խաղաղութիւնը քաղաքում:

Նուխուց երէկ, սեպտեմբերի 16-ին, առաւօտեան 11 ժամ 50 րոպէին հեռագրով հաղորդում են:

Այստեղ խաղաղութիւն է տիրում ներկայումս:

Կովկասից Պետերբուրգ են մեկնել Փոխարեայի խորհրդի անդամ պ. Զոնիկովսկին, ինչպէս զէպարտամէնտի փոխ ղեկավար պ. Իվանովը և հարկային բաժնի վերաբնիչ պ. Նարբովը — մասնակցելու նախարարութեան խորհրդին: Յայտնի է արդէն, որ պ. պ. Իվանովը և Նարբովը Պետերբուրգից Բաղու էին եկել պ. Զոնիկովսկու հետ միասին, որոշելու նախարարութեան քննարկների և առհասարակ նախագիշտի կրած վնասների չափը:

Կովկասի Փոխարեայի օգնական գեներալ-մայոր Ե. Ն. Շիրիկինը զեկուցանում է ներքին գործերի մինիստրի օգնական գեներալ-Տրեպոլին, որ Բաղում սեպտեմբերի 15-ից սկսած հանգստութիւն է տիրում. հանգիստ է և նախահանգների շրջաններում: Բաղադրում

բոլոր մագ՝ ղինները բաց են արել: Հայերը և մահադականները սկսում են երկալ քաղաքի բոլոր մասերում: Տրամադրութիւնը բարեյաշու է:

«Астр. Вѣстникъ» լրագրի տարվով, Աստրախանի թաթարները ներկայումս խիստ անհանգիստ են այն մասին, որ կովկասեան դէպքերը կարող են կողմնակի կերպով թէկուզ թեթեւ ստուեր ձգել նրանց վրա և վնասել նրանց մնացած ազգաբնակչութեան աշըւոմ:

«Չունենալով ամենին ոչ մի ընդհանուր բան կովկասեան այն աւազակների և մարդապանների հետ, որոնք բաղկացած են լեզգիներից, ըրդերից, պարսիկ թուրքերից — Աստրախանի թաթարները ծայրայեղ դժգոհութեամբ նայում են այն ամենի վրա, ինչ որ կատարվում է Կովկասում»:

«Вирж. Вѣд.» լրագիրը իր № 225 և 229-ի մէջ երկու առաջնորդող յօդուածներով աշխատում է բացատրել, թէ ինչի մէջ է կայանում չարքի արմատը կովկասեան արեւմտահեղ դէպքերի վերաբերմամբ: Առաջին յօդուածում, ի թիւս այլոց, ասված է.

«Պրիւնց Նագոլեօնի գեկուցումը լոյս է սրբուում կովկասեան խուզումեան մի կարևոր կողմի վրա: Յաճախ, մասնաւոր հեռագրերը և նոյն իսկ կիսապաշտօնական — գործակալական հեռագրերը — հայերին էին վերադրում անկարգութեան և կոտորածի յանցանքը. հայերը, իր թէ միշտ նախադարձակ են լինում մուսուլմանների կամ ոստիկանութեան վրա և առաջ են բերում նրանց դիմադրութիւնը: Այդ հեռագրերը, բաց չառնելով և կիսապաշտօնականները, գրում էին մուսուլմանները և նրանց թղթակիցները: Մի քանի գործակալական հեռագրերով մուսուլմանական շարագրութիւնը ապացուցել է նոյնքան ճշգրութեամբ, ինչպէս և այն փաստը, որ կովկասեան ոստիկանութիւնը, ահագին թուով, բաղկացած է մուսուլմաններից»:

Միւս կողմից ուղղակի ցուցմունքներ կային, որ ոստիկանութիւնը ոչ միայն պատասպանում է թուրքերին, այլ և աշակցում է նրանց հայերի և նոյն իսկ ռուսների ու նրանց գոյքի դէմ»:

Ապա լրագիրը, ցոյց տալով թէ ինչ դեր են խաղացել թուրք ոստիկանները Բաղու և Բալասանի կոտորածների ժամանակ, ցոյց տալով թէ թուրքերը որպիսի աւազակային կազմակերպութիւններ են ստեղծել և վարձական մարդապանների զբաղմունք հաստատել, որի մասին վկայում է նաև Բաղու քաղաքապետի Նոյեմբուր, ասում է. «Այդ ամենը ոչ մի կասկած չէ թողնում մի քանի շրջաններում տարածված այն կարծիքի ստուծեան մասին, թէ իր Գոլկասում տեղի ունեցող սոսկալի դէպքերի յանցաւորները հայերն են հանդիսանում: Այդ ցուցմունքները բոլորովին պարզ կերպով բացայայտում են կովկասեան կոտորածի և հանգամանքները և մեղաւորները»:

Դրանից յետոյ լրագիրը կանգ առնելով Զանգեզուրի պրիստով թուրք Մելիք-Ասլանովի կատարած ոճրագործութեան վրա, գրում ենք է յայտնում, որ այդ չարագործ պաշտօնեան մինչև այսօր գինուրական դատարանին չէ յանձնված, որովհետև նրա գործածը այնպիսի ոճրագործութիւն է, որի համար կախաղանի պատիժ է սահմանված օրէնքով:

— Երկրորդ առաջնորդող յօդուածով լրագիրը, ապացուցանելով հանդերձ, որ թուրքերը զինաւորված են եղել, որ նրանք կազմակերպված են եղել հայերի վրա յարձակվելու, թալանելու, կոտորած անելու համար, գտնում է, որ այնու ամենայնիւ, իսկական յանցաւորները նրանք չեն, չարքի արմատը նրանք չեն, այլ զինաւոր յանցաւորը — Կովկասում 10 տարի թաղաւորող կամայականութիւնը, բէթիմն է. նա, որ ցոյց տուեց վայրենի մուսուլման մասսային, թէ սուրբ իրաւունքը — զրօ է:

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XXX

Հասկանալի է, որ մեր դրությունը Գիտության այս ինչ օրեր են: Մասնաւոր դեպքեր ինչ է սպասում մեզ վաղը:

Մենք միշտ անհոգ ու անպատրաստ ենք եղել: Անտառած մեծ է, — այսքան ենք հասկացել դարերի անողորմ անաշտները մէջ: Յենյակ ենք Երկրի խոտերի վրա և մաշվել, հալվել ենք, այսօրվայ օրին հասնել: Մի կերպ հոյալ գնանք — պայծառական վաղելի առաքելութիւն: Գիտե՞ցէ այս դժբախտութիւնը ինքն իրան անցնէ — այսպէս ենք մխիթարվել: Երբեք ենք ապրել, օրից օր, տարուց տարի ձգձգել այն թշուառ կեցութիւնը, որ — ներկայ աղէտները նոր ու անհերքելի ապացոյց — մեր ճակատագիրն է կազմում:

Հասկանալի է, որ: Հարկւր տարուց աւել է, մենք ապրում ենք քրիստոնեայ պետութեան մէջ, առաջադիմել ենք, կրթվել ենք, բայց փրկվել է մեր պատմական ճակատագիրը: Ո՛հ, Այսօր էլ հային կարելի է մորթել, կրակել լոկ այն պատճառով, որ նա հայ է: Քսան երրորդ դարի գաղափարներով սողողված հայը այսօր փախչում է մոնղոլական սրից ու վայրագութիւնից ճիշտ այնպէս, ինչպէս փախչում էր Մ. Մ. Պապի հայը Զարաթուստրի առաքելից:

Լուսաւորութիւն, քաղաքակրթութիւն, քրիստոնէութիւն — այս, կայ Երկրի բոլորը, բայց կայ և մեռած է և մոնղոլականութիւնը: Ինչպիսիք փոխվել մեր ճակատագիրը: Մի և հինգ չէ թէ ով է մոնղոլական թրից փախչողը — ցեղիկը ու սերթով հագմած քաղաքների դարձեցին, թէ բոլորի, արեւմտուր տասն երեքերորդից:

Մենք այս չենք հասկանում: Եւ այսօր էլ նոյնը, ինչպէս մշտն — Անտառած մեծ է: Մեզ գոհացնում է Աստուծո՛ւ մեծութիւնը, իսկ մեր ճակատագիրը, մեր յանձնարարական զբոսը — խառնութիւնը գնում է մեզ հետ, հալում, մաշեցնում է մեր գոյութիւնը: Կոտորում են հային: Դա նոր բան չէ. — հայը միշտ կոտորվել է: Բայց նոր չէ և այն, որ հայը այդ կոտորող սրի աշխատակիցն է եղել իր «Անտառած մեծ է» ողորմելի մխիթարութեամբ:

Տեսէ՛ք: Այսօր դժբախտութեան մի ամբողջ ծով է հաւաքվում մեր երկրներ: Գնալով նա ընդարձակվում է: Երեւելի կոտորած, այրված գիւղեր էին այլ յորձանքներ թափում այդ ծովի մէջ, այսօր հաս հաս սպանութիւնները, արտեր հրդեհներ, անասուններ քել-տաններ: Վաղը — ով է երաշխաւոր — դարձեալ քաղաքներ ու գիւղեր կը գնան նոյն ծովը ԼԵ՞ց: Ներսիս Ամեն օր կատարվում է զարհուրելի գործը, դժբախտութիւնը դադար չէ առնում: Իսկ մենք ինչ ենք անում:

Նստած սպասում ենք Աստուծո՛ւ մեծութեան: Օգնութեան կանչող սրտապատառ ձայներ է բարձրացնում մեր թշուառութեան ծովը: Բայց մենք կարծում ենք թէ այդ ծովը կարող ենք ցամաքեցնել, կաթիլներ հանելով այնտեղից: Օրեր, շաբաթներ, ամիսներ են անցնում: Ուզում են տեսնել թէ վերջապէս ինչ ընդունակութիւն ենք ցոյց տալիս այս ահաբեկ դժբախտութեան դիմաց: Բայց ինչ է տեսածը:

Եւ կը պատմեն մի երկու տեսարան:

Նախ և առաջ հայոցում են հարուստներին: Ամեն տեղ, ամեն մի անկիւնում, ուր խօսք կայ մեր սե օրերի մասին, կատարել փրկված հայոցում են մեր հարուստներին, որոնք այս սարսափների ժամանակ թողել փախել են արտասահման: Ինչպէս են փախել — հարցնում են մեզանից, ինչպէս այստեղ չեն, որպէս զի բաց անեն իրանց անդուկները: Նրանցից իւրաքանչիւրը կարող է մի ամբողջ գիւղ նորից կենդանացնել: Բայց նրանց տեղին էլ յայտնի չէ: Արտասահման: Օ՛, ինչպէս չէ, արտասահմանը կարող է նրանց փախալից փախած հաճախ մարմինը ազատել մոնղոլական սրից: Բայց դա ամարդութիւն է, դա եսամոլութիւն է...

Ուրիշ մի տեսարան:

— Գիտե՞ք, մի բան հաւաքենք թշուառացիների համար, ասացին մի խումբ տիպիկներ և գնացին, փողոցներն ընկան: Լաւ թէ վատ, շատ թէ քիչ, մի բան հաւաքեցին: Յոյս ունենալ 200 հաւաքել, հաւաքեցին միայն 50—100: Ի՞նչ անէին խնդները: Ուզելը, խնդրելը էր պակաս, թէ այն տները հարստութիւնը, որոնց շէնքով նրանք ներս մտան «երես սեպնեցում», ինչպէս ասում են ողորմութիւն և նպաստ հաւաքողները իրանց երեսի մասին: Ի՞նչ անէին: Մի հարուստ պատասխանում էր թէ, իր տունն էլ է այրվել և

տուեց մի օրուրի, միւսը ոչինչ չէր տուեց, ասելով թէ մի անգամ արդէն տուել է: Ինչպէս գիտե՞ք, հարուստների տներում ոչ կրծած կոնֆէաների հաշիւ են պահում, ոչ արտասահմանից բերել տուած զգեստեղէնի և հոտաւէն ջրերի հաշիւը: Այնտեղ միայն մի հաշիւ են պահում — թէ երբ և որքան են տուել այս կամ այն խեղճին: Իսկ վաւերագրերով հաստատվող հաշիւ դեմ ինչ կարելի է անել: Մարդը մի անգամ տուել է, պրծաւ գնաց...

Ահա և մի երրորդ տեսարան: Մտածում են թէ ինչ միջոցներով փող ստանան թշուառները համար: Սրածիւր ծրագրեր ենք ան առաջ դալիս: Մէկի առաջարկութեամբ ընդունում են ծաղկեփուշները վերացնել նրանց փոխարէն նուէր տալ: Միւսի առաջարկութեամբ վճարում են սիրուն իրեր վաճառել յօգուտ սովածներին: Երեւելի «Մշակի» մէջ տպված էր թէ մի խումբ օրերորդներ և երեւոսարդներ միտք են յղացել «ապել պեղեցիկ ստացաբեր» և ծախել ցանկացողներին: Հիացմունքով էր նկարագրված այդ միտքը: Եւ ինչպէս չէ հիանալ: Յօդուածագիրն ասում է. «Թէ նուէր ուղարկողը և թէ ստացողը սրտի խոր ուրախութիւնով պէտք է գնէ այդ ստացաբերները մի հատ, վճարելով այնքան, որքան իր սիրուն է ուզում, իսկ ստացողը մեծ հրճուածութեամբ պէտք է ստանայ իրան ուղարկված ստացաբերները բարեգործութեան նուէր, որը փոխարինելու է ծաղկեփուշին կամ տօրթիւնը»:

Ել ինչ էք ուզում: Սովածներն ու հրկեղանները ապահովված են:

Հանգուցեալ երգեմբաւ Պարոնեանը անմահացել է այս տիպի բարեգործութիւնը, նկարագրելով մի կնոջ, որ կամենում է «բէշ մը պարել յօգուտ սովածներու»: Այս միջոցը դեռ մեղմանում չէ շահագործվել, բայց անշուշտ չի մոռացվել, և մենք գուցէ շուտով կը տեսնենք, թէ ինչպէս Թիֆլիսի խառնութիւնը հարկերից կը ծախեն զգեստ առնելու համար, որպէս զի գնան պարելու Նախիջևանի կամ Շուշու թշուառացիների օգտին: Այդ օգուտը կը լինի մի բանի հարկեր բուրել և էլ...

Ահա ինչ ենք անում մեր ահաբեկ ցաւը դարձնելու համար: Բայց ինչ են ապացուցանում մեր այս բոլոր «գեղեցիկ մտքերը», մեր ծրագրերները, մեր վաղվոցը: Մի բան միայն — այն, որ մենք չենք հասկանում մեր դրութեան ամբողջ սարսափը, այն, որ կամենում ենք ծովը ցամաքեցնել գաղտնի: Ելի «Անտառած մեծ է» հին, պատմական խեղճութիւնը: Ելի անհոգութիւնը, էլի անկարողութիւնը: Այս անգամ էլ, ինչպէս միշտ, մենք — սարսափելի է գրել այսպիսի խօսքեր — մոնղոլական սրի աշխատակիցը պիտի հանդիսանանք մեր ժողովուրդը կոտորելու գործի մէջ: Այսպէս է ցոյց տալիս մեր գործելու եղանակը:

Հասկանանք, ան, հասկանանք վերջապէս: Թշուառութիւնը այնքան փոքր չէ, որ կարելի լինի նրանց փարսախել շքեղ ստացաբերով, ծաղկեփուշերով, տօրթիւնով, պարերով, հարուստներին հայոցի վրա:

Հարկաւոր է կարգին գործ: Հայոցից են հարուստներին, այդ փոքրիկ, գլուխը փախստականներին: Միեւնից են նրանց անարգ սիրտին: Բայց դրանով մի բաւական տեսարան:

Կարող էք դռնէ դուռն ընկնել, ձեր սպասած օրուրու տեղ 1-ը ստանալ: Բայց դա յոգնեցուցիչ է, երկրորդ անգամ այլ ևս չէք գնալ անելու, և դուրս կը գալ, որ դուր «երես սեպնեցում» միայն մի չնչին գործ էք կատարել:

Կարելի է տօրթիւնը էլ մի բանի բուրել ստանալ: Բայց վերաբերական կը լինի կարծիք, թէ տօրթիւ մի ուսեղ միջոց է մեր դժբախտութեան դէմ:

Ո՛հ, Այդ չէ պէտք է անել: Այս անգամ դէն գցենք բարեգործութիւն, զթաւրտութիւն, խղճահարութիւն և այլ այսպիսի հին մտքեր ու հասկացողութիւններ շահագործելով: Այս անգամ հրապարակ հանենք պարտաւորութիւնը, ընդհանուրի պարտաւորութիւնը: Աղէտը մեծ է, ահաբեկ, ժողովրդի գոյութեան հարց է դրված անողորմ կերպով: Այստեղ գութի ու խղճի բան չէ կայ, այստեղ ամեն մէկս պիտի պարտք կատարենք:

Տնւրը սահմաններ, տանք ամեն մէկս առանց խառնութեան, առանց նիւթանութեան հարցի անելու: Ամեն մի հայ պարտաւոր է տալ այնքան, որքան կարող է: Թաղերում կանոնաւոր ցուցակներ կազմել, որոշել տուրքի չափը, ամսէ ամիս հաւաքել և ապա կենտրոն-

նացնել այդ բոլորը մի ընդհանուր նպատակով, մատոյց անդուկի մէջ: Այսպիսով ամենքս կօգնենք մեր դժբախտացած եղբայրներին, ամենքս՝ սկսած գիւղացուց, արհեստավորից, մինչև այն հարուստները, որոնք այսօր չեն ամաչում կամ փախել արտասահման կամ իրանց ունեցածից մի բանի կօպէկներ տալ և պարտք կատարած համարել իրանց:

Ո՛հ թէ բարեգործութիւն, այլ պարտականութիւն: Ո՛հ թէ շնորհ, այլ տուրք, հարկ: Եւ այն ժամանակ, միայն այդ ժամանակ, մենք կարող կը լինենք մասի, թէ կուտ մենք ահաբեկ դժբախտութեան դէմ, թէ մոնղոլական սրից ազատում ենք մարդկանց:

Անհատները ոչինչ են իբրեւ անհատներ այս թշուառութեան ծովի մէջ: Բայց անհատները միացած բազմութիւնը, հաւաքական գործակցութիւնը — սա ոյժ է, որ սարբեր կարող է հարթել:

Լ.

ԱՐԴԱՐ ՊԱՆՈՒՆԸ

Մօտ օրերս Պետերբուրգում տեղի է ունենալու նաւթարդեւաններու համագումար, որին մասնակցելու են և այն բոլոր արդեւանաբերական ձեռնարկները, որոնք սերտ կապ ունեն նաւթային վառելիքի հետ: Իսկ այժմ Ռուսաստանում արդեւանագործական մի խոշոր ձեւը շահագործված չէ նաւթային վառելիքի հարցով:

Կը նշանակէ, առաջիկայ համագումարին իսկապէս մասնակցելու են հրաւերված համաբերան բոլոր խոշոր արդեւանաբերութեան տուղերը:

Կապիտալիստները հաւաքվում, միասնականում են իրանց շահերի համար: Թաւրարական վառելիքայինութիւնը մի բանի ժամում սրբեց երկրի երեսից ծաղկած նաւթադաշտի կէսից աւելին: Միլիոններով կարողութեամբ ծուխ դարձած՝ բերեալ բարձրացաւ ու ցրել եկաւ անհունութեան մէջ: Ինչպէս է ուրեմն՝ որ կապիտալիստները հաւաքվին և իրանց շահերի մասին մտածեն, միջոցներ մշակեն:

Այդ հաւաքումը ոչ միայն ընական է, այլ և անհրաժեշտ:

Բայց մեծերը, ուսեղները ու հարուստները կողքին կան և թոյլեր, փողեր ու անկարողներ, որոնք նոյնպէս վրասովի են:

Վնասովի են: Դա բէշ է:

Հարուստը որքան վրասովի, կրկին որքան բան կը նստայնալ, գրպանները անկիւններում, որով կարող է գնէ ապրել:

Իսկ բանւորները ահաբեկ դասակարգը: Ի՞նչ անեն նրանք, ուր դիմեն, ուր խաղաւեն, ուր միջ պահանջներ:

Մեծ է բանւոր դասակարգը, բայց չափազանց լար է նրա գրպանը, այնքան լար, որ յաճախ չէ երկում, գոյութիւնն անգամ չէ ցոյց տալիս:

Բանւորների ահաբեկ մեծամասնութիւնը, իսկական կամ ֆիդելական պրօլետարիատն արդէն ներկայացրել է իր որոշ, կազմակերպված պահանջը համագումարի առաջ: Տուգնելից մի բանիսլ նոյն իսկ խոստացել են պաշտպանութիւն ցոյց տալու նրանց արդար և օրինական պահանջներին:

Իսկ մտաւոր պրօլետարիատն ի՞նչ անէ, ուր դիմէ:

Ո՛ւր դիմեն բազմաթիւ հաշուապահները, «կանաթաշէկները», գործակալները, կառավարիչ ու կառավարչի օգնականները, փողով պարպանները, գրադերները և այլն, և այլն:

«Ֆիդելական» պրօլետարիատը կազմակերպված է, իր որոշ խնդիրն ու պահանջներն է ներկայացնում, որովհետեւ ոյժ ունի, գործի է:

Մտաւոր պրօլետարիատը ցրված, բաժան, բաժան, անմիատեղ վիճակի է:

Հրդեհել եկաւ և մի բանի ժամում լափեց նրանց ստացվածքը մի մասը: Հրդեհեց յետոյ ներս մտաւ թուրք գաղանացած խուճանը և կողոպտեց նրա տարիները վաստակի «հալալ» արդեւները:

Տասնեակ տարիներով այդ մտաւոր պրօլետարիատը քրտնեց թափեց, իր քրտնեցը բաւարարած կաթիլներով, իր ջրերի ու մկանների մաշվող ուժով մի քիչ միջոց հաւաքեց... Բայց յանկարծ եկաւ զաւլումը, դարեկը ու տարաւ: Այսօր հայ ինտելիգենցիա բոլոր պրօլետարների տասնեակ տարիներ խնայած իրեն ու կօպէկները բաժանված են Բալթիկայի, Սարաւի, իւր մասին և դրանց հարեան թուրք գիւղեր:

Ինչ ընակիչները մէջ: Իսկ երեւմտ մի բանի կօպէկի տեղ, կիսապաշտով համարվող մի կառավարիչ, մի վարպետ, մի հաշուապահ՝ այսօր Թիֆլիս կամ մի այլ վայր փախած, հաղել մի հին զգեստ հագին, մնացել է շարած, ձեռքը ծոցին:

Դրանք, մի բանի ժամում ամեն ինչ կորցրած այդ ինտելիգենցիա աշխատաւորներն էլ սրտի տրոփիւնով սպասում են Պետերբուրգի մեծ համագումարին: Նրանք էլ ուղարկել են այդ համագումարին իրանց խոսքի խոսքը:

Դա միայն խոսքի չէ, այլ արդարութեան պահանջ:

Նրանց պէտք է բաւարարութիւն տալ: Թիֆլիս հաւաքված այդ 300 ինտելիգենցիա բանւորները խոշորում են համագումարին, որ պետութիւնից նաւթարդեւաններով Կրէստներ 30—50, գուցէ և 100 միլիոն վրասներով պահանջելու՝ չը մոռանան և իրանց, նաւթադաշտի մտաւոր պրօլետարներին, որոնց կորուստը հաւանում է մինչև 2 միլիոն ռուբլու:

Մի բանի հազարի համար այդ աշխատաւորներն իրանց ընտանիքներով խնայած են ունեցել 2 միլիոնի չափ կարողութիւն: Ամեն մէկին հաղել 2000-ից մինչև 4—500 ռուբլի ընկնի:

Այդ է նրանց ուղածը: Դա և խնդիր է և արդարութեան պահանջ:

Արդար ու բարոյական մարդիկ պէտք է պաշտպան կանգնեն նրանց այդ պահանջին:

Խաժակ

ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

II

Իմ նախորդ յօդուածով ես մասնացոյց արեցի այն մի շարք պայմանների վրա, որոնք մինչև այժմ խոշորում են եղել մեր ուսուցչական դասակարգի բարեփոխման: Ուսուցչական դասակարգի մասին խօսելիս մենք սովորաբար անտես ենք անում այդ դասակարգի իրական մասը: Խօսքս վարժուհիների մասին է, թէ որքան մեծ դեր ունեն կատարելու վարժուհիները մանուկների կրթութեան գործում: Ամեն մի դպրոցում, լինի նա արական թէ՛ իգական վարժուհիների ունեցած բարոյական մեծ դերը անհերքելի է: Այդ դերի մէջ նրանց ոչ մի ուսուցիչ չէ կարող փոխարինել: Թէ՛ վարժուհիները ներկայութիւնը դպրոցներում որչափ բարեբար ազդեցութիւն է անում սանկիւնների վրա՝ ընթացում է նրանց զգացմունքները, ուղղում է նրանց բարք ու վարքը, այդ դիտեն նրանք, որոնք մօտ են կանգնած եղել դպրոցական գործին: Տալով վարժուհիներին բարոյական այդպիսի մեծ դեր դպրոցներում, մենք, ճիշտն ասած, երբեք հող չենք տարել ձեռնահաս և պատրաստված վարժուհիներ ունենալու մասին: Այն դպրոցները, որոնք մինչև այժմ մեր մէջ վարժուհիներ մատակարարող հիմնարկութիւններ են եղել՝ բոլորովին չեն համապատասխանում իրանց նպատակին: Այդ է պատճառը, որ մեր նախկին ծխական դպրոցների ժամանակ մեր վարժուհիները դասակարգի գործունէութիւնը մանկավարժական ասպարէզում շատ անգոյն է եղել. դա պատճառը նախ նրանց ստացած սահմանափակ կրթութիւնն է եղել և երկրորդ՝ մասնաւորական կրթութիւնում բացակայութիւնը:

Ահա ձեզ մի 16—17 տարեկան օրերորդ, որ աւարտել էր Գայանեան կամ Յովնանեան դպրոցը, որ դեռ ուսման հոտն էր միայն աւել, որ դեռ ևս ինքը սովորելու մեծ կարել ունէր՝ արդէն դառնում էր սովորեցնող — մանկավարժ, ժուհի և ստանձնում էր մանուկ սերնդի կրթութեան ծանր և պատասխանատու գործը: Հասկանալի է, թէ ինչ արդիւնք կարող էին տալ այն դպրոցները, որոնց ղեկավարները այդպիսի տեսակ անձեր էին: Աւելացրէք դեռ վրա նաև այն չնչին վարժարութիւնը (120—180—240 ռուբլի) որ ստանում էին մեր վարժուհիները, որը վերաւորական լինելով հանդերձ, միայն սպանում էր նրանց մէջ ամեն մի եռանդ և աշխիւ ձգտում՝ ապա հասկանալի կը լինի թէ որչափ վնաս էր կրում մեր մանուկ սերնդի կրթութեան գործը այդպիսի պայմաններում:

Ներկայումս մեր դպրոցների բացումը մեր ուսուցչական կրթութեան է դարձնում նաև այդ դասակարգը բարելաւելու հարցի վրա: Իմ ուսուցչական պաշտօնավարութեան ընթացքում առեթ ունենալով ծանօթանալ բազմաթիւ հայ վարժուհիների մանկավարժական գործունէութեան հետ՝ ես այն եզրակացութեան եմ եկել, որ դպրոցներում նրանց ձեռքում պիտի լինի աւելի դաստիարակչական գործը, ըստ դասաւորութեան: Գոնէ մինչև այժմ դասաւորու-

Թեան գործը նրանց ձեռքում միշտ կաղել է։ Այդ երևույթի պատճառը ոչ թէ միայն նրանց նախապաշարաստութիւնն էր, այլ և դա ունի իր պատմական պատճառները։

Պատրաստեցէք ձեռնհաս վարժութիւններ, ըստեղծեցէք նրանց համար մարդավայել նիւթական պայմաններ և մինչ անելի քան հաստատեցէք ենք, որ հայ կիներ իր արժանաւոր բարձրութեան վրա կը կանգնէ նաև մանկավարժական ասպարէզում։

Ներսէս Եանանայ

2 արդյոյ

ԿՈՏՈՐԱԾԸ ՇՈՒՇՈՒՄ

Սեպտեմբերի 12-ին

Բագուից սկսել է բանտը գիւղացիների վերադարձը։ Ամեն օր հարիւրաւոր բանտորներ փախչում են դէպի հայրենիք, մասնաւոր դէպի Սիսիան։ Նրանք երկաթուղով գնում են Գանձակ և այնտեղից գողի գող, հայ գիւղերի միջով, հինգ-վեց օրում, ոտով հասնում են իրանց տները։

Ոստիկանապետը յայտնեց բազմաթիւ, որ գնդերաւ-նահանգապետի կարգադրութեամբ հաղորդակցութիւնը Շուշի-Նախիջևն է, ճանապարհորդները գնալու են կողակների հրահրութեան տակ և Նախիջևն արդէն ճանապարհված է ալիւր։ Սա քանիտեղից յայտարարութիւնն է...

Թուրքերը շարունակում են իրանց ընտանիքների տեղափոխութիւնը դէպի Մուղանի տափարակները։ Հայերն էլ սպասում են ճանապարհի բացվելուն։ Նրանք գաղթում են... մէկը Թիֆլիս, միւսը Ռոստով, երրորդը Մոսկվա։ Եւ գաղթում են կրկին չը դառնալու մտքով։ Դժոխք է Շուշին, աւերակների մի կողմ, մի տեսութիւնով կայրների գաղանջներով շրջապատված։ Հապա մի պէտք է չէնցնէ այդ աւերակները։ Պիտեք իրանց դիրքերն ամրացնում են, պատահադրաման բաժանում են լաւի իրանց մէջ և այժմ աւելի ազատ կերպով են դէնք ստանում։ Նրանք սպանաւոր են տալիս իրանց երկու և կէս զոյգ այրված տների և մի աղայի իւր թաւանված կայքի համար, իսկ մենք մեր հարիւրաւոր աւերակներն ու աւար տուած հարկաւորութիւնը չենք կարողանում հրապարակ բերել։ Ահա ինչ առաւելութիւններով է Շուշու հայը իր գաղթը արդարացնում։

Իրաւացի է։ Բայց մի մոռանաք, որ տուկուն, համբերատար, քաջ սրտի տեր մարդը չը պէտք է ընկնի թոյլ, վախկոտ մարդերի տակ, այլ հնազանդելով ձախտադրի առաջ պէտք է քաջութեամբ դիմադրէ ամեն արգելքներին և թշուառութիւններին։ Հարկաւոր է կամքի ուժ, համբերութիւն— և ժամանակը ամեն բան կարողարացնէ, ամեն ինչ հրապարակ կը հանէ իր իսկական գոյնով...

Տ.

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒՄԻՑ

Սեպտեմբերի 11-ին

Բաւական երկար ժամանակ է, ինչ ոչինչ չը գրեցինք «Մշակ»-ին մեր քաղաքի մասին։ Ուրիշ ժամանակներում, երբ մի օր է քաղաքից բերչ ու չը թղթակցութիւն երկուստ լընգրութեան մէջ, մի տեսակ յետ ընկած և նսեմ էր երկուստ մեր աշխույժ քաղաքը, և ընդհակառակը գոյում, առաջադէմ էինք համարում այն տեղերը-գիւղերը, զաւառա-քաղաքները և այն, որտեղից յաճախ էին երեւում թղթակցութիւններ։ Բայց ներկայ պայմաններում բոլորովին հակառակը պէտք է ցանկանալ, գովել, մեծարել այն «տեղերը, որտեղ կարողանում են լուրերով պահպանել, այլ խօսքով գերծ մնալ այն խայտառակ և աւժօթաբեր գործողութիւնների նկարագրութիւնները, որոնցով ահա քանիտեղից ամիսն է գնում, ինչ գրեթէ շարունակ լցվում են լրագրութեան էջերը...

Այժ, որքան է դժուար լինէր հաստատապէս երաշխաւորել մեր քաղաքում տիրող անդորութեան երկարատևութիւնը, բայց և այնպէս ի նկատի ունենալով տեղիս թուրք երկատարութեան հաստատութիւնը և կարող լինելը՝ զսպելու թուրք ամբողջ անմիտ և փասակար հակառակները, մասնաւոր է այն, որ ըստ լուրեր շատ լաւ յայտնի է, թէ մի քան ծանր հետեւանքներ կարող է ունենալ ամեն մի անգլոյժ քայլը, մենք իրաւունք ենք համարում ենթադրելու, որ Բաթումը կարող է ընդմիջալ գրեթէ մնալ անպատիւ գործողութիւններից և եղբայրասպան վատ անունը իր ճակատին չըդրանքուց։ Այս ասելով, ի հարկէ, չէ կարելի

ուրանալ, որ մասնաւոր ընտարութիւն կրող ոչ դուրեկան դէպքերը անսպասելի են մեզ մօտ։ Դրանք եղել են, կան և միշտ էլ կը լինեն։ Երկու կողմերն էլ, որպէս առանձին կրօնով և սովորութիւններով մնում և կուտարապէս դեռ ոչ բարձր աստիճանի վրա գտնվող ժողովուրդներ, անկարող են գերծ լինել տեղաւոր և անպատեհ անհատներէ, միայն թէ ցանկալի էր, որ ոչ մի կողմի հասարակութիւնն էլ չը խաբւէր, չը թեքւէր և չէնթաքկվէր այդ նենգաւոր և հետեւանքի մասին ոչ մի հաշիւը և անակացող անհատներին ազդեցութեան։ Ուրքան մեզ յայտնի է, մարդկային ցեղի ծնունդ առած օրից սկսած և ոչ մի փոքր ի շատէ ուշադրաւ վարդապետութիւն չը կայ, որ որ և է մի ցեղի երջանկութիւնը գտնէր նրան դրացի ցեղի ոչնչացման մէջ, իսկ վերջին վարդապետութիւնները հօ քայքայեցանք ըստ արդգերին միութիւն, եղբայրութիւն և հաւատարմութիւն են գոռում։

Որեքն ինչու համար, ինչ հաշիւ կայ, ով և ինչով կարող է երաշխաւորել այդ բոլոր խայտառակ գործողութիւններին հետեւանքը օգտաւած լինելու մասին—ահա հարցեր, որոնց յաճախ պէտք է կրկին իրար մէջ երկու կողմերն և և այնուհետև խնդրել շատ պարզ կը լինի։ Ընդհա է, մեր ասածները շատ ուշ են այն տեղերի համար, որտեղ նենգաւոր մարդկանց արդէն աշուղդի է իրանց նպատակին համար, բայց ուշ չէ այն տեղերի համար, որտեղ դեռ մարդիկ չեն շարակել իրանց ձեռքերը անմիջներէ արեւմուտ...

Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԱՇՏԱՐԱԿԻՑ

Օգոստոսի 26-ին

Դրութիւնը մեր գաւառամասում կրկնաւորաւ է։ Վերջին երկու ամսվայ ընթացքում տիրող հանգստութիւնը կարծէք առերես, բօղալիկված էր և թուրք ազդարանութիւնը նորից յուզման նշաններ է ցոյց տալիս։ Դեռ մայիսի վերջին, երեւանի դէպքից բէշ յետոյ, մօտակայ Յուլի մեծ թրքաբնակ գիւղը, որ վաղուց յայտնի է ինչպէս գողերի և աւազակների օջաղ, սկսեց շարժման նշաններ ցոյց տալ։ Հարեան թուրք գիւղերից հաւաքվում էին այդպիսի զինված խմբեր և պատրաստվում էր մի ինչ որ դժոխային ծրագիր։ Այդ բոլորին բէշ չէր նպատակում մեր կառավարական գաղափար մտնել բէշը, որը այդ օրերը հետագայում լինելով իր պաշտօնից, փոխանակ իր հայրենի գիւղը քաշվելու, ապրում էր Յուլիում և թէ էր տալիս զանազան չափաւոր ազէնանքներ։

Այդ օրերում օրը ցերեկով տարան Դոթիւր գիւղի նախիրը, որը դարձնելու համար գաւառապետ Լիմերմանի և մեր գիւղից գնացած պատուաւոր մարդկանց քարոզը ոչ մի դրական հետեւանք չունեցան և այսօր զօթուրդները բոլորովին դուրս են լծկանից և կթի կովերից։ Մամիլապէս հաղորդակցութիւնը դադարեց։ Թուրքերը կարել էին Բարանի մեծ ճանապարհը և ճանապարհորդներին օրը ցերեկով թալանել և ոտով զլխով անհետացնել մի սովորական բան էր դարձել։ Հէնց այդ օրերն էր, որ Արարանի ճանապարհից անցնող վերաւորված մի օշականցու սայլով, ստրիպ-նիկի ուղեկցութեամբ, Աշտարակի հիւանդանոցը գնալու, հասնում են զինված յուլիցները, խուճ ստրաժնիկի ձեռքից և, տանելով իրանց գիւղը, բարբարոսաբար այրում են սայլի հետ միասին ամբողջ հասարակութեան ներկայութեամբ։ Տեղական ազմիխիտաբան վերին աստիճանի անարարութեամբ էր նախում այս եղեռնագործութիւններին և հայ ազգաբնակիչներին, որ ոչ մի ցանկութիւն չունի կարող լի խաղաղ կուլտուրական աշխատանքից, իր դաշտից ու այգուց, ստիպված էր ինքնապաշտպանութեան միջոցների մասին մտածել և, տեսնելով որ թուրքերի բարբարոսութիւններին այլ կերպ վերջ գնել չէ կարելի, լճուստ է մի դաս տալ նրանց։

Այդ դասը տրվեց յունիս 4-ին և շատ խրաւարական էր։ Այդ օրը բազմաթիւ զինված թուրքեր, մանր մունր սպանութիւնները թողած, խմբական յաճախում են գործում Իրանի չալան գիւղի վրա աւելի մեծ գործ տեսնելու նպատակով։ Սկսվում է հրացանաձգութիւն, վրա են հասնում հարեան գիւղերից զինված հայ երիտասարդները և թուրքերին հալածելով լցնում են Յուլի գիւղը։ Չը կարողանալով զսպել իրանց արդար զայրոյթը և ցանկանալով ապագայի խաղաղութիւնը ապահովել հայերը անմիջապէս յարձակվում են Յուլի վրա, ընտելներն մի մասը սպանվում, իսկ

միւս մասը, կանանց և երեխաների հետ, բարձրանում են Արագածի ստորոտը մի լեռնալանջի վրա և պատսպարվում։

Այդ օրից յետոյ թուրք ազգաբնակիչները իրան հանգիստ էր պահում, իսկ հայերը իրանց կողմից ոչ մի ջանք չէին խնայում վերականգնելու նախկին հարեանական յարաբերութիւնները։ Բայց այս ցանկալի դրութիւնը երկար չը տևեց. յուզման նշանները նորից երևացին։

Օգոստոսի 18-ին ամիսագեցի մի հայի ջրաղացի մէջ սպանեցին համալիցի թուրքերը։ Երկու օր յետոյ, 20-ին, Աշտարակի մօտ սպանված գտան եղբայրից Սարգսիւրն և իր 20 տարեկան որդուն։ Երէկ, 24-ին, Արիս թուրքաբնակ գիւղում հաստատված կողակներից երկու հոգի ազարակցի, Սիբիրից վերադարձած թուրք Փողա Բուզաղ օղլու առաջնորդութեամբ, գալիս են փարեցի հայերի բնատանները, որտեղ պատահելով գիւղի քահանային և երկու ուրիշ գիւղացիներին, սաստիկ ծեծում են և խուճ են երկու հրացան ու հեռանում։ Հետեւել օրը նոյն մարդիկ ծեծում են նոյն գիւղացի Մարկոս Վարդապետներին։

Այսօր տեղեկութիւն եկաւ, որ Թաքիայ գիւղի թուրքերը կարել են Բուրական տանող ճանապարհը և դիրքեր են բռնել։ Իսկ յուլիցները, որ արդէն վերադարձել և հաստատվել են իրանց գիւղում, հալածել են Արարանից վերադարձող օշականցիներին։ Ինչպիսիք վերջնայայ այս եղեռնագործութիւնների շարքը, առ այժմ գուշակել դժուար է, յամենայն դէպս լաւ ապագայ չէ խոստանում և տեղական ազմիխիտաբանային վրա լուրջ պարտականութիւն է դրվում ետանդուն միջոցներ ձեռք առնելով պատեհու չարագործներին, որով թէ մի անաչառութեան և թէ օրէնքի ոյժի գոյութեան հաստատուն ապացոյց տուած կը լինէր յուզվող ազգաբնակչութեան և միանգամայն յունիսեան ոչ ցանկալի դէպքերի կրկնվելու առաջն առած կը լինէր։

Մարգ-նի

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դիւրք գիւղ, (Գիւղից զաւառ) սեպտեմբերի 16-ին։ Ամեն անգամ, երբ թուրքերը մտադիր են լինում մի անկարգութիւն սարքելու և հայերի դէմ իրանց ազգախնդրներին զրգռելու, հանքում են և տարածում մի օր և է սուտ և անհեթեթ լուր, որպէս զի յետոյ անկարգութիւն պատահած ժամանակ մեզը պէն հայերի վրա։ Այդպիսի մի լուր տարածվեց այստեղ անցնող շարքի։ Գիւղացու առաւոր անող մի յայտնի անձնաւորութիւն, որ յարգանք և պատիւ ունի թէ հայերի և թէ թուրքերի մէջ և որի ընտանիքը այստեղ—Գիւղը գիւղումն է—անցնող շարքի, ամսիս 3-ին նամակ է ստանում Գիւղից, որ շատ պէ վերադառնալ Գիւղից, որովհետեւ տեղական թուրքերը լսել են, որ իւր թէ յիշեալ անձնաւորութիւնը այստեղի հայերից 600 մարդ է պատրաստել թուրքերի վրա յարձակվելու համար։ Այդ անհեթեթ լուրը հերքելու և թուրքերին խաղաղացնելու համար յիշեալ անձնաւորութիւնը միւս օրը, ամսիս 4-ին առաւօտեան գնաց Գիւղից և մի երկու օրից յետոյ տեղեկութիւն տուեց իր ընտանիքին, որ թուրքերին կարողացել է համոզել, որ յիշեալ լուրը բոլորովին սուտ և և այնտեղ—Գիւղից յարձակ անողութիւն է։ Այնու ամենայնիւ տեղիս հայերը երկիւղի մէջ ընկան և սպասում էին յարձակման թուրքերի կողմից, որ հնարել են այդ սուտ լուրը իւրեւ կանխաշնաւ։

Այդ լուրված դրութեան մէջ ամսիս 7-ին լուր հասաւ գիւղը, որ Միւսուսուրի ճանապարհին թուրքերը կտորել են մեր գիւղացի մի ընտանիք, որ Բագուի կտորածից փախած, գալիս են եղել տուն։ Կտորված ընտանիքը բաղկացած է եղել չորս հոգուց՝ մէկ աղամարդ, երկու կին և մէկ երեխայ։ սպանվել է նոյնպէս և սալապանը, որ մեր գիւղացի է, ընդամենը սպանվել են հինգ հոգի և բոլոր կայքը յափշտակվել։ Ամսիս 7-ին այստեղից մարդիկ գնացին, դիակները բերին բնակարանները և զանազան տարածութեան վրա, ինչպէս երևում է թշուառ գոհերը կտորածի ժամանակ փախել են այս և այն կողմ, բայց անխղճաւոր կտորորդները գնալով հասել են նրանց և տեղիս ու տեղը սպանել դիակները վէրքերից երկուստ է, որ գնալու

ների կարկուտ են թափել խեղճերի վրա։ կային 6, 5 և 4 դնդակներ վէրք ունեցող դիակներ, իսկ երեխան ոտերի վրա ունէր գնդակի վէրք, իսկ գուլիսը շախմատված էր սրով։ Այդպիսի սպանութիւն միայն մարդ—գաղանդ կարող է անել։

Մի քանի խօսք տեղական իշխանութեան վերաբերմամբ։ Դիակները մնացել են թափված սպանութեան տեղում բացօթեայ երեք օր, մեծ ճանապարհի մօտ, շրջապատված մի քանի թուրք գիւղերով։ Բայց տեղական պրիստաւը, որին, ինչպէս ասում են, յայտնել են այդ մասին Միւսուսուրից, չէ բարեհաճել գալ յանցագործութեան տեղը ընտելութիւն կատարելու և ոչ մի կարգադրութիւն չէ արել։ Դիակները այստեղ ընկելուց յետոյ, նոյն օրը, ամսիս 7-ին ժամանակաւոր դնում են գերեզմաններում և յայտնում են տեղիս պրիստաւին։ Բայց մինչև հիմա ոչ պրիստաւն է գալիս, ոչ ըննիչը և ոչ բժիշկը, որ հետազօտեն դիակները և թոյլ տան գերեզմանները կնքելու։

Եթէ թուրքերը սկսեն յարձակում գործել խմբովին հայ գիւղերի վրա, հայերը ոչ մի տեղից օգնութեան յոյս չունեն, որովհետեւ գաւառում ամենեւին զօրը չը կայ։ հայերը պէտք է յոյսները դնեն իրանց վրա և իրանք իրանց պաշտպանեն։

Հիմա էլ միջեւ անպատեհ թուրք գորդները այստեղ էլ մեզը կը պեն հայերի վրա այն բոլորովին սուտ լուրեր հիման վրա, որ իւր թէ հայերը կամեցել են յարձակվել թուրքերի վրա։ Հայերը չեն իմանում թէ ինչպէս պաշտպանեն իրանց գիւղը, բայց անխղճները դեռ յարձակութեան դիտարկութիւն են վերադրում նրանց։

Նոյն օրը, ամսիս 5-ին, երբ Մուսուսուրի ճանապարհին մեր մարդկանց կտորում են, Գիւղից մեր ճանապարհին էլ երկու ֆուրգոնով Բագուից փախած եկող հայ ընտանիքներ են կտորաւորում քաղաքանիցի, քիշուրդիցի և այլ գիւղերայից և ասում են, որ Գիւղից մեր ճանապարհին գնացող պատն էլ են կտորաւորում։ այսպէս ամեն ճանապարհները դէպի երկաթուղի փակված են հայերի համար։ Երթեկեւորութիւնը դադարել է թուրքերի երկուստ։

Գ. Տէր-Մարկոսեան

Վլադիկապոլիս, Օգոստոսի 13-ին

Դրութիւնը հայերի և թուրքերի մէջ քանի գնում լարվում է։ Շրջանի պետը 2 օր առաջ կանչեց իր մօտ 5-ական ներկայացուցիչներ և նրանց բարոյական աջակցութիւնը խնդրեց. թուրքերը անմեղ գառնուկներ ձեռքած, ուսուցում են ցոյց տալ, որ կանաչեցի ազգանշանները հայերն են տալիս։ Հայերը խնդրեցին բազմաթիւ պահանջներ դնել, պետը խոստացաւ։ Մարդիկ են ընտրված շարունակ շրջելու և պատահած թուրքապետութիւններին առաջն առնելու համար։ Գաղաթի ծայրում մի սպանված հայի դիակ գտնվեց. ոճրագործն անյայտ է։

Ինչպէս գիտեք, Նաղաւոր կայարանի մօտ գնացել խորանաւուն էր տեղի ունեցել, այդ ժամանակ սպանվել էր նաև մի ինդուշ. մեր քաղաքի թուրքերի ներկայացուցիչները հարկաւոր համարեցին օլլա ուղարկել միւս քաղաքի. այս դէպքը սաստիկ անհանգստացնում է հայերին, մասնաւոր, որ առաջինն է։ Ի պատիւ պարսկահայտաւ թուրքերի, պիտի ասեմ, որ նրանք իրանց շատ կօրեկներ են պահում. այդ բանին շատ է նպաստում փոխհիւպատոս Դաւութ-խանը։

Օտարական

Ա. Գ. Լ. իս, 11 սեպտեմբերի։ Երեւանի ժամանակաւոր գնդերաւ-նահանգապետ պրից Նապոլեօնը Լարաբայ շրջապայիով, Մեղրի վրայով եկաւ, այցելեց Օրդուբաթ քաղաքը և երէկ երկուրեւ ժամը 5 1/2-ին ժամանեց Արագուի։ Հայ ժողովրդի կողմից սիրալիւ ընդունելութիւն գտաւ. զանազանից ղօղանշիւնը հրաւիրեց ժողովրդին եկեղեցի։ Պրիցը այցելեց ս. Քրիստափոր եկեղեցին և ապա ընդունեց ժողովրդի սրտամոռոք աղերսագրերը։ Այս գիշեր մեր հանգիստ գիշերներից առաջինը պէտք է լինէր. բայց դեռ ժամը 11-ը չը կար, երբ տանակերտից եկան և յայտնեցին, թէ թուրքերը քիչիցն տարան տաւարի նախիրը նախընդ (հայ) հետ միասին և ոչխարի հօտը հովուի (թուրք) հետ միասին. ներքին-ազգուկեցի եկան և յայտնեցին, թէ անյայտ չարագործներն բազում սպանել են մի 15 տարեկան անմեղ պատանու։ Առաւօտեան գնդերաւ-նահանգապետը ուղևորվեց դէպի Նախիջևն—աւերակների երկիրը, պրիս-

Շահադ.

ԿՈՎԿԱՍԸ ԵՒ ՄԱՄՈՒԼԸ

I

Նամակագիրը իրաւացի կերպով գան-
վում է, որ անտարբեր ռուս հասարակու-
նեան վարվում է և մամուլը: Տպվում ե-
կար տեղեկութիւններ Կովկասից, բայց հ-
րանքի մի բանի տար խօսքեր ջարդվող
է՛ն կարող գտնել այդտեղ: Ահադէն
բարձրացնում են անտոնաական հանգա-
նքի պտոճառով, հաշոււմ են թէ

Ինքանք ծրագրերը: Կերչապէս հակառակ
սակցութիւնը նրան յաղթեց—և նա ը
անգութ սպանողներէն ձեռքից: Այսպէս զն
տեղիք դուք նրան, Բազուրի մահմետական
կառ տեսնելով Շահթախտինսկու հակ
կուսակցութեան ազդեցութեայ կորստաբե
տեանը: Ձեզանից ամեն մէկը տեսնո
ր իրապէս Բազուրն այլ ևս գոյութիւն չ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Ժողովը, հայ ձայնաւորներէց մէկէ ա
շարեւորութեամբ, նախ ծանօթացրեց ներ
գանդով թուրք ու հայ գիւղական ձայնա
ներին Փոխարքայի հրահանգներէ ու 1864
գեղեցիկ կանօնադրութեան հետ ու յա
նցեալ վերջինի յօդուածներէ ընդառա
խեան, որ տեղեց մի ընանի օր: Մեր գեղմա
յին ժողովը առաջագէտ, ժամանակի պահ
ներին համապատասխանող ողով աչքի չըն
կալուածատէրերէ, որոնք շատ ազդեցին գիւ
ղականութեան ու իրանց ձեռքին ունէին գիւ
ղական ձայնաւորներին, շահերին
մատչեալութեան խմբագրութեան 1864 թ. կ

Ստ. Տէր. Աւետիքեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Զրբաւականանալով այս հերքումով, ես
մոռւ եմ Տ. ստորագրութեան տակ թագ-
ապրոնին և առաջարկում են նրան բանալ
ձածկանախնդ և յայտնել ի գիտութիւն բ-
րին, թէ ի՞նչ հիմքով և թէ ի՞նչ աղբիւրն են

Электротпечатная типографского Т—ва «Гермесъ». Мад. ул. № 15.